

ներէն քանի մը ազդեցիկ մարդիկ խորհուրդ կու տան անոր հրաժարիլ պատրիարքութենէ ու հեռանալ Կ. Պոլսէն:

Մինչդեռ Կ. Պոլսոյ մէջ կիրքերը իրենց զազաթ-նակէտին հասած էին, լուր կը հասնի Երուսաղէմէն թէ Յոյները կը յաջողին վերջնականապէս տիրանալ Հապէշներու տեղերուն և նկրտիլ ձեռք զարնելու Ս. Յակոբեանց վանքին՝ առարկելով թէ կանուխէն իւրենցը եղած է ան: Աստուածատուր պատրիարք հեռացած էր Երուսաղէմէն և Պրուսա կը սպասէր ու իր աշակերտ Մարտիրոս վրդ. Ղրիմեցին քիչ առաջ զըրկած էր Կ. Պոլիս, որպէսզի քաղաքի երևելիներուն հետ խորհրդակցաբար ճար մը գտնէ վտանգին առաջքն առնելու: Ղրիմեցիի նախաձեռնութեամբ ժողով մը կը գումարուի Ս. Նիկողայոսի եկեղեցին (22 Դեկտ. 1655):

Այնաեղ կ'որոշուի Եղիազար վարդապետի գործակցութեան ղրմել և մարդ ղրկելով բերել տալ զայն Պրուսայէն, ուր այդ օրերը գացած էր: Եղիազար կը դառնայ Կ. Պոլիս 1656 Յունուար 25ին ու նախապէս կ'երթայ Ս. Աստուածածին: «Անկէ տարինք զինքը Ս. Նիկողայոս», կը գրէ Երեմիա:

Որպէսզի միանգամայն դիմադրուի մտնան տրուի պատրիարքական վէճերուն և Մուղնեցի նորէն աչք չունենայ Կ. Պոլսոյ աթոռին՝ Եղիազար 1656 Փետրուար 12ին ժողով մը կը գումարէ և թուղթ մը կը պատրաստէ տէրութեան ուղղեալ, յայտնելով թէ պոլսահայ ժողովուրդը համաձայն է որ՝ ըստ նախապէս տըրւած թազաւորական հրովարտակին՝ այսուհետեւ ալ պատրիարք կամ առաջնորդ անունով ու է սեպակուխոտք չկոխէ մայրաքաղաք ու դարձեալ վիֆլիներով կառավարուի պատրիարքական աթոռը: Եղիազար ըստ պառնալիքով այս թուղթը կնքել կու տայ բոլոր ժո-